ՏԵՂԵԿԱՏՈՒ

Գ. Սիմէօն Առաքելեան Առաքելեանը Բաքուի գործակալ Տ. Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանի ձեռքով ուղարկել է Մայր Տաճարի յատակին փռելու համար 510 արշին փսխոթ։

Մայր Տաճարի Լուսաբարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսը ընդունելով յիշեալ նուէրը՝ յայտնում է նուիրատուին իւր շնորհակալութիւնն ու օրհնութիւնը։

ԿՈՉ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ներկայ 1911 թուին բոլորում է իր գործունէութեան երեսնամեակը։ Ընկերութեան կանոնագրութիւնը հաստատուած է 1871 թուին, իսկ առաջին ընդհանուր ժողովը տեղի է ունեցել նոյն տարուայ նոյեմբերի 15-ին։ Թէ որպիսի նպատակ ունի յիշեալ պատկառելի ընկերութիւնը հայկական կեանքում, այդ մանրամասնօրէն նկարագրուած է նրա յօբելեանական ատակերազրդ հրատարակութեան մէջ։ Բաւական է յիշել որ նա մեր հայկական իրականութեան մէջ մեծ են շանաւոր կուլտուրական դեր է կատարում։

ա) Ներկայիս Ընկերութիւնը Կովկասում գտնուած հայկական բոլոր աշխի ընկնող վայրերում ունի 46 ճիւղեր։

բ) Թիֆլիսում պահում է որբանոց, ուր մնում են 33 որբ հայ աղջիկներ և որոնք ուսում են առնում հայկական դպրոցներում։

գ) Ունի հարուստ գրադարան, ընթերցարան, որոնցից օգտուում են ամիսը 3000 հոգուց աւելի անձինք։

դ) Պահում է աշակերտական ճաշարան, որից օգտուում են՝ օրական 300-ից աւելի՝ չքաւոր հայ աշակերտաշակերտուհիներ։

ե) Արժէքաւոր երկեր հրատարակելու համար ունի առանձին «Հրատարակչական ֆոնդ», որ կազմուած է Ա. Պողոսեանի նուիրած գումարով։

զ) «Աբովեան-Նազարեան գրական ֆոնդ»՝ հայ գրականագէտներին նպաստելու համար։

է) Օգնում է թէ կենտրոնում և թէ գաւառից եկած բազմաթիւ կարօտեալներին ու հիւանդներին և գործն դեր է կատարում ժողովրդական ընդհանուր աղէտների՝ սովի, հրդեհների և զանազան համաճարակ հիւանդութիւնների ժամանակ։

ը) Օգնութեան ձեռք է կարկառում հայրենիք վերադառնալ ցանկացող հազարաւոր տաճկահայ գաղթականներին։

թ) Բացի վերոյիշեալներից, Կովկ. Հ. Բ. Ընկերութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում գաւառի շատ յետ մնացած հայ ազգաբնակութեան մէջ լուսաւորութեան տարածման վերայ, նպաստելով գիւղական մօտ 1000 աղբատ դպրոցներին։

ժ) Ֆաւառներում պահում է դրադարաններ, ընթերցարաններ, արհեստանոցներ և այլ հանրօգուտ հիմնարկութիւններ։

Վերոյիշեալ ուղղութեամբ գործում են նաև Ընկերութեան ճիւղերը՝ ըստ չափու իրանց կարողութեան։

Կ. Հ. Բ. Ընկերութիւնը՝ քաջ գիտակցելով լուսաւորութեան անհրաժեշտ դերը հասարակական կեանքի յառաջխաղացման մէջ և տեսնելով հայ ազգաբնակութեան խոշոր մասի անուսման տգիտութիւնը, առանձնապէս ուշադրութիւն է դարձնում այդ յոյժ կարևոր գործի վրայ, և իբրև ամենակարևոր և խոշոր կոմիտէ նրա յօրելեանի, նա վճռեց յաւերժացնել վերջինս, հիմնելով «ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴ», որի նպատակն է լինելու, առաջին՝ աւելի լայն ծաւալով տարածել լուսաւորութիւնը հայ ազգաբնակութեան մէջ և երկրորդ՝ օգնել այն բազմաչխատ հայ ուսուցիչ-ուսուցչուհիներին, որոնք երկարատև ու ծանր աշխատանքից դարձել են անզօր՝ իրանց գոյութիւնը պահպանելու, տալով նրանց կամ միանուագ նպաստ կամ նշանակելով կենսաթոշակ։

Անհուն բերկրութեամբ պիտի յիշատակել, որ թէև բարերարներ, մեզ մօտ գտնուել են բարերարներ, որոնք՝ ժողովրդական լուսաւորութեան կարևորութիւնը

գիտակցելով, արձագանք են տուել ընկերութեան ձայնին, օգնութեան ձեռք կարկառելով լուսաւորութեան տարածման համար, որոնց անունները, պատկերները և գործերը տպուած են յօբելեանական հրատարակութեան մէջ, սակայն այդ բոլորը մի կաթիլ է կարեաց ովկիանոսում։

Ահա թէ ինչու Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան Խորհուրդը դիմում է Ձեզ, յարգելի Պարոն և խնդրում է չը զլանաք Ձեր լուման ձգելու յօգուտ վերոյիշեալ ֆոնդի, որի նպատակը անչափ վեհ է և նշանակութիւնը կենսական ու մեծ։ Բայի յիշեալ ֆոնդը, Դուք կարող էք Ձեր նպաստը յատկացնել համաձայն ներքև տպուած կանոնադրութեան § 2-ի, ուր մանրամասնօրէն նշանակուած են Ընկերութեան նպատակները։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՑ՝ ՎՍԵՄԱՓԱՑԼ ԿՈՄՍ Ի. Ի. ՎՈՐՈՆՑՈՎ ԴԱՇԿՈՎԸ իր բարձր ուշադրութեանն արժանացնելով ընկերութեանս Խորհրդի խնդիրը, բարեհաճեց թոյլատրել մինչև սոյն տարուայ վերջը հանգանակութիւն բանալ իր փոխարքայութեան սահմաններում՝ յօգուտ վերոյիշեալ ֆոնդի։ Ուրեմն՝ մեզ մնում է օգտուել վերոյիշեալ իրաւունքից և լրջօրէն վերաբերուել դէպի այն ֆոնդը, որից այնքան մեծ բարիքներ պիտի ոպասեն թէ լուսաւորութեան տարածման գործը և թէ ազգաստ ուսուցչութիւնը, որի նիւթական դրութիւնը այնքան խղճալի է։

Կ. Հ. Բ. Ընկերութեան Խորհուրդը լիայոյս է, որ հայ հասարակութեան բոլոր խաւերն ի բոլոր սրտէ արձագանք կըտան ներկայ կոչին և, ի նկատի ունենալով ընկերութեան բեղմնաւոր կուլտուրական մեծ դերը հայկական կեանքում, իրանց առատ նուիրատուութեամբ թէ կը խրախուսեն և թէ ոյժ կըտան ընկերութեանը աւելի ևս արդասաւոր կերպով և մեծ ծաւալով արտայայտել իր գործունէութիւնը՝ գլխաւորապէս գիւղական և ազգաստ ազգաբնակութեան մէջ։

§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը՝ օրէնքով սահմանած միջոցներով ու կարգով, իր ուժերի զարգացման համեմատ՝

ա) պահպանում է արդէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները, հիմնում է և նիւթականապէս նպաստում է նորերի բացման.

բ) օժանդակում է ժողովրդի մէջ արհեստները տարածելուն;

գ) օգնում է ուսանողներին ուսման մէջ.

դ) Լոյս է ընծայում գրքեր ու պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար և այլ գրական երկասիրութիւններ.

ե) հիմնում է տպարանները, վիմագրատները, մուզէյումները, գրադարանները և ընթերցարանները.

զ) հիմնում է հիւանդանոցներ, ամբուլատորիաներ (հիւանդանոց երթևեկ հիւանդների համար), ապաստարանները, հասարակական ճաշարանները, թէյատները, էժանագին ընակարանները, գիշերելու տները, պատսպարանները, հանրակեցարանները, աշխատանքի տները և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) օգնում է տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ, այն է՝ սովի, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդեհի և այլն, որի համար՝ իւրաքանչիւր առանձին դէպքում պատշաճաւոր թոյլատրութեամբ՝ բացում է հանգանակութիւն, կազմակերպում է սանիտարական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից լիազօրներ.

ը) օգնում է կարևոր դէպքում նիւթականապէս և բարոյապէս իր տեղական ճիւղերին, ինչպէս և հայկական այլ ընկերութիւնների և հաստատութիւններին:

Ստացուած գրքեր.

Ա. Տեղեկագիր. 1909—1910 ուսումնական տարուայ Մարիամեան—Յովհաննեսեան օրիորդաց դպրոցի. Թիֆլիս. 1911.

Բ. Սիօն վարդապետ Տէր Մանուէլեան.—Արարատեան բարբառի ժողովրդական բառերի ցուցակ. Բառապիշիկ. Ս. Էջմիածնի տպարան. 1911.

Գ. Միացեալ ընկերութիւնը Հայոց. վարժարանք. դպրոցական տարեշրջան 1910—1911. Կ. Պոլիս,

Դ. Գրիգոր աւ. քհ. Մանդակունու ՉՉՈՒԱՆՔՆԵՐ. Թիֆլիս 1911. գինն է 20 կոպ.

Ե. ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ. գրեց Գարեգին վրդ. Յովսէփեան. Բ. տպագրութիւն. Թիֆլիս. 1911. գինն է 10 կոպէկ.